ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԽՍՀՄ-Ի ՓԼՈՒԶՄԱՆ ԵՎ ԱՊՀ-Ի ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ՆԱԽՕՐԵԻՆ

1991թ. օգոստոսյան խռովության տապալումից հետո ԽՍՀՄ-ի փլուզման գործընթացը մտավ եզրափակիչ փուլ: Իշխանության միութենական մարմինները կաթվածահար էին եղել և կորցնում էին իրենց ազդեցությունը երկրում: Աճում էր Ռուսաստանի ղեկավարության ազդեցությունը, որի դիրքորոշմամբ էր մեծապես պայմանավորված խռովարարների պարտությունը: Միության կազմի մեջ մտնող սուբյեկտների անկախացման գործընթացը նոր թափ ստացավ, նրանց միջև անմիջական, հորիզոնական կապեր էին հաստատվում: Խորհրդային Միության տարածքում ծագած ազգամիջյան հակամարտություններն ավելի սաստկացան: Նրանցից ամենասերկարատևն ու ամենաբարդը ղարաբաղյան հակամարտությունն էր: Այս գործընթացներն օրինաչափ էին և հիշեցնում էին Ռուսական կայսրության փլուզման շրջանում դարասկզբին տեղի ունեցած իրադարձությունները:

Օգոստոսի 19-21-ի խռովության ձախողմանը հաջորդեց "անկախությունների շքերթը", անկախություն էին հռչակում նույնիսկ այն հանրապետությունները, որոնք մինչ այդ մասնակցում էին նովո-օգարյովյան գործընթացին, որի առջև միութենական նոր պայմանագիր մշակելու խնդիր էր դրված: Այդ հանրապետությունների շարքում էր նաև Ադրբեջանը, որի Գերագույն Խորհրդի նստաշրջանը օգոստոսի 30-ին ընդունեց անկախության հռչակագիր, որով վերականգնվում էր ինքնիշխան հանրապետության անկախությունը և այն հայտարարվում 1918-1920 թթ. Ադրբեջանական Հանրապետության իրավահաջորդ[1]:

Լեռնային Ղարաբաղը, որը միայն 1921թ.՝ խորհրդային իշխանության օրոք, կուսակցական մարմնի անօրինական որոշմամբ մտցվեց Ադրբեջանական ԽՍՀ-ի կազմի մեջ՝ ինքնավար մարզի կարգավիճակով, այդ հռչակագրով իսկ Ադրբեջանի կազմից դուրս էր մնում: Ադրբեջանական հռչակագրի ընդունումից անմիջապես հետո, նույն օրը՝ օգոստոսի 30-ին, Լեռնային Ղարաբաղից ընտրված ԽՍՀՄ-ի ժողպատգամավորները հայտարարեցին, որ այդ հռչակագիրը չի տարածվում Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի (ԼՂԻՄ) և Շահումյանի շրջանի վրա, որ վերջիններս ճանաչում են միայն Միության և Ռուսաստանի սահմանադրությունները, և դիմում էին ԽՍՀՄ-ի ու ՌԽՖՍՀ-ի նախագահներ Գորբաչովին ու Ելցինին՝

[1] Տե՛ս www.calend.ru

անհապաղ որոշում ընդունել ԼՂԻՍ-ին ու Շահումյանի շրջանին հատուկ կարգավիճակ տալու և, որպես Ֆեդերացիայի ինքնուրույն սուբյեկտ, ԽՍՀՄ-ի կազմի մեջ մտցնելու մասին[2]:

Չնայած դիմումի արդարացիությանը, փլուզվող կայսրության պայմաններում այն անիրականանալի էր: Պայքարը շարունակելու համար անհրաժեշտ էր նոր քաղաքական մոտեցում:

Սեպտեմբերի 2-ին Լեռնային Ղարաբաղի մարզային և Շահումյանի շրջանային խորհուրդները՝ մասնակցությամբ տեղական խորհուրդների պատգամավորների, համատեղ նիստում որոշում ընդունեցին ԼՂԻՍ-ի և Շահումյանի շրջանի վարչական տարածքներում Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն (ԼՂՀ) հռչակելու մասին: Հռչակագրով հայտարարվում էր, որ ԼՂՀ-ն օգտվում է ԽՍՀՄ-ի Սահմանադրությամբ ու օրենսդրությամբ հանրապետություններին տրված լիազորություններից և իրեն իրավունք է վերապահում ինքնուրույնաբար որոշելու իր պետական-իրավական կարգավիճակը[3]: Հռչակագիրը հիմնվում էր միջազգային իրավական նորմերի և ԽՍՀՄ-ի օրենսդրության վրա, որը ինքնավար կազմավորումների ժողովուրդներին և համահավաք ապրող ազգային խմբերին իրավունք էր տալիս ինքնուրույնաբար լուծելու իրենց պետական-իրավական կարգավիճակի հարցը՝ ԽՍՀՄ-ից միութենական հանրապետության դուրս գալու դեպքում:

ԼՂՀ-ի հռչակումը կարևոր քաղաքական քայլ էր արցախահայության ինքնորոշման իրավունքի իրագործման հարցում: Այն կոչված էր առավելագույնս համապատասխանեցնելու արցախյան ազատագրական շարժումը միջազգային և խորհրդային իրավունքի "խաղի կանոններին": Եթե 1989թ.-ի դեկտեմբերի 1-ի որոշումը՝ Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի վերամիավորման մասին, որոշ քաղաքական ուժեր և գործիչներ դիտում էին որպես Հայաստանի կողմից ոտնձգություն Ադրբեջանի տարածքային ամբողջականության նկատմամբ և, հետևաբար, միջազգային ու խորհրդային իրավական նորմերի խախտում, ապա արցախահայության կողմից իր պատմական հայրենիքում ԼՂՀ-ի հռչակումը՝ ազգերի ինքնորոշման՝ համընդհանուր ճանաչում ստացած իրավունքի իրականացման պարզ և հստակ եղանակ էր: Ադրբեջանը դատապարտեց այդ քայլը և նորաստեղծ հանրապետության հետ խոսեց ուժի դիրքերից:

Ուժերի հարաբերակցությունը ղարաբաղյան հակամարտության գոտում զգալի չափով պայմանավորված էր Մոսկվայի դիրքորոշմամբ, որը խռովության ծախողումից հետո փոփոխություններ էր կրում: Ինչպես և մյուս ոլորտներում, այդ դիրքորոշման ձևավորման գործում ևս թուլանում էր կենտրոնական

---

[2] Տե՛ս Ազգ, 31.VIII.1991:
[3] Տե՛ս Հայաստանի Հանրապետություն, 3.IX.1991:

իշխանությունների ազդեցությունը, որոնց քաղաքականությունն ուղղված էր կայսրության պահպանմանն ու հիմնականում ադրբեջանամետ էր, և աճում էր Ռուսաստանի նորընտիր ժողովրդավարական ղեկավարության ազդեցությունը՝ հունիսին համաժողովրդական քվեարկությամբ նախագահ ընտրված Բ. Ելցինի գլխավորությամբ:

Հակամարտության գոտում տեղակայված խորհրդային բանակի և ներքին զորքերի ստորաբաժանումները սեպտեմբերից հիմնականում չեզոք դիրք էին բռնել, իսկ միայնակ ազերիները ոչինչ չէին կարող ձեռնարկել: Նրանք խուսափում էին հայերի հետ ուղղակի առճակատումից. Ադրբեջանում ավելացել էր դասալիքների թիվը: Նույնիսկ Թուրքիայում էին մտահոգված այսպիսի նոր իրավիճակով[4]:

Նոր իրավիճակում, որ ստեղծվել էր խռովության տապալումից հետո ողջ Խորհրդային Միությունում, սեպտեմբերի 21-ին Հայաստանում անցկացվեց հանրաքվե, որի ժամանակ քվեարկության իրավունք ունեցողների 94,39%-ը քվեարկեց հանրապետության անկախության օգտին, ինչի հիման վրա սեպտեմբերի 23-ին ՀՀ Գերագույն Խորհուրդը հռչակեց Հայաստանի անկախությունը[5]: Թեև ԽՍՀՄ-ի կենտրոնական իշխանությունները, Ռուսաստանը, աշխարհի պետությունները այդ փուլում չճանաչեցին Հայաստանի անկախությունը, այնուամենայնիվ դա անհրաժեշտ քաղաքական քայլ էր փլուզվող կայսրության "փլատակների" տակ չմնալու, հայ ժողովրդի դարավոր իղձերի իրականացման և ազգային հիմնախնդիրների լուծման առումով:

Խռովությունից հետո նվազել էր Կենտրոնի ազդեցությունը ԽՍՀՄ-ում տեղի ունեցող գործընթացների վրա ընդհանրապես և խորհրդային տարածքում ծագած ազգամիջյան հակամարտությունների կարգավորման գործում մասնավորապես, այդ թվում նաև "Լեռնային Ղարաբաղում և նրա շուրջը": Հեղինակազրկված և կաթվածահար եղած կենտրոնական իշխանություններին պետք է փոխարինեին նոր միջնորդներ: Ղարաբաղյան կարգավորման գործում այդպիսի առաքելությամբ փորձեցին հանդես գալ քայքայվող կայսրության ազդեցիկ հանրապետությունները՝ Ռուսաստանը և Ղազախստանը:

Այդ հանրապետությունների նախագահներ Ելցինն ու Նազարբաևը սեպտեմբերի 20-22-ը այցելեցին տարածաշրջան, հանդիպեցին Հայաստանի, Ադրբեջանի և Լեռնային Ղարաբաղի ղեկավարության հետ: Բանակցություններն ավարտվեցին Ժելեզնովոդսկում սեպտեմբերի 23-ին ստորագրված համատեղ կոմյունիկեով, որի տակ Ռուսաստանի, Ղազախստանի, Ադրբեջանի և Հայաստանի ղեկավարների ստորագրությունների կողքին բացակայում էր Արցախի ներկայացուցչի ստորագրությունը, ինչն արդեն կասկածի տակ էր

---

[4] Տե՛ս Turkish Daily News, 6.IX.1991 և Մարմարա, 26.IX.1991:
[5] Տե՛ս Հայաստանի Հանրապետություն, 24.IX.1991:

դնում փաստաթղթի կետերի իրականացումը: Կոմյունիկեն նախատեսում էր հետևյալ միջոցառումները. Իրադադարի հաստատում, Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ ոչ սահմանադրական ակտերի չեղյալ հայտարարում, իշխանության օրինական մարմինների լիազորությունների ճանաչում, կոնֆլիկտի գոտուց բոլոր սպառազեն կազմավորումների դուրս բերում՝ բացառությամբ ԽՍՀՄ-ի ներքին գործերի նախարարության ներքին զորքերի և պաշտպանության նախարարության զորամասերի[6]:

Սակայն երկրում և տարածաշրջանում ստեղծված քաղաքական իրավիճակում, ուժերի գոյություն ունեցող հարաբերակցության պայմաններում այդ միջոցառումները հնարավոր չէր իրականացնել: Ելցինի այս քայլը առավելապես վկայում էր, որ ղարաբաղյան կարգավորման հարցում ևս Կենտրոնին փոխարինելու է գալիս Ռուսաստանը, և հաստատում այդ հանրապետության՝ տարածաշրջանում ունեցած շահերը:

Իրենց քաղաքականությունը արդարացնելու նպատակով Հայաստանի Խորհրդարանի նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը և նրա համախոհները փորձում էին որոշ դրական միտումներ գտնել Ժելեզնովոդսկի կոմյունիկեում: Իրականում այն հայկական կողմին ոչինչ չէր տալիս, փաստաթղթում չէր խոսվում ազգերի ինքնորոշման իրավունքի մասին, որի վրա հիմնված էր արցախյան ազատագրական շարժումը: Առաջնթացն այն էր, որ խնդիրը դուրս էր գալիս կայսերական կենտրոնի իրավասությունից և դառնում բազմակողմ բանակցությունների առարկա:

Հոկտեմբերի կեսերին Արցախ ժամանեց Ռուսաստանի և Ղազախստանի դիտորդների աշխատանքային խումբը, որն ստեղծվել էր Ժելեզնովոդսկում ձեռք բերված պայմանավորվածությունների հիման վրա: Խմբի անդամների մասնակցությամբ սկսված հայ-ադրբեջանական բանակցություններն անարդյունավետ էին, քանի որ Ադրբեջանը ղարաբաղյան խնդիրը համարում էր իր ներքին գործը և հրաժարվում քննարկել այն: Դիտորդների կարծիքով, ադրբեջանական կողմն արհեստականորեն էր սրում իրավիճակը՝ կոմյունիկեով նախատեսված միջոցառումները ձախողելու համար: Վիճելի էր արցախյան պատվիրակության մասնակցության հարցը. դրա անհրաժեշտությունը նշված էր Ելցինի կողմից ռուսաստանցի դիտորդներին տրված լիազորություններում, իսկ Ղազախստանի դիտորդների մոտ այդ կետը բացակայում էր[7]:

Սակայն առանց Արցախի ներկայացուցիչների մասնակցության անհնար էր հասնել խնդրի կարգավորմանը, քանի որ վերջինիս էությունը արցախահայության ինքնորոշումն էր, այլ ոչ թե Հայաստանի և Ադրբեջանի միջև տարածքային վեճը, ինչպես փորձում էր ներկայացնել ադրբեջանական

---

[6] Տե՛ս Ազգ, 25.IX.1991:
[7] Տե՛ս Երկիր, 18 և 22.X.1991:

կողմը: Ադրբեջանի իշխանությունները չէին ցանկանում իրականությանը բաց աչքերով նայել, ճիշտ չէին գնահատում իրադրությունը, խուսափում էին լուրջ քննարկումներից, ինչն ավելի էր բարդացնում իրավիճակը:

Երկրում տիրող համընդհանուր ճգնաժամի պայմաններում նոր տիպի՝ իրավահավասար, փոխշահավետ հարաբերություններ էին հաստատվում Հայաստանի և Ռուսաստանի վարչա-տարածքային միավորների, կազմակերպությունների, ձեռնարկությունների միջև տնտեսության և մշակույթի ոլորտներում[8]: Չնայած միջոցների սղությանը, շարունակվում էր Ռուսաստանի բգնությունը Հայաստանի աղետի գոտու վերականգնման գործում[9]:

Հոկտեմբերի 21-ին աշխատանքներն սկսեց ԽՍՀՄ-ի նոր ժամանակավոր խորհրդարանը: Տասներկու հանրապետություններից (Մերձբալթյան հանրապետությունների անկախությունն արդեն ճանաչվել էր) ներկա էին յոթի ներկայացուցիչները, ինչը նշանակում էր, որ մնացած հինգ հանրապետությունները՝ այդ թվում նաև Հայաստանը, չեն մասնակցելու քաղաքական նոր միության ստեղծմանը: Խորհրդային Միությունում առկա տնտեսական անկումը, ազգամիջյան հակամարտությունները, տարբեր ժողովուրդների մոտ նկատվող ազգային ինքնագիտակցության աճը անհեռանկարային էին դարձնում միասնական նոր պետության ստեղծման փորձերը:

Հայաստանի նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը չմասնակցեց նոյեմբերի 14-ին Նովո-Օգարյովոյում կայացած ԽՍՀՄ-ի Պետխորհրդի նիստին, որտեղ Գորբաչովը և միութենական յոթ հանրապետությունների ղեկավարները ձեռք բերեցին պայմանավորվածություն, ըստ որի ստեղծվելու էր նոր պետություն՝ Ինքնիշխան Պետությունների Միություն, որը հանդես էր գալու որպես միջազգային իրավունքի սուբյեկտ և փոխարինելու էր Խորհրդային Միությանը[10]: Ռուսաստանի նախագահ Ելցինը համոզված էր, որ նոր միությունը կկայանա[11]: Սակայն տասներկու հանրապետություններից հինգի՝ հատկապես Ուկրաինայի, հրաժարումը անդամակցելու Ինքնիշխան Պետությունների Միությանը հարցականի տակ էր դնում վերջինիս կայացումը:

Խորհրդային Միության պահպանողական ուժերը՝ բոլոր միջոցներն օգտագործելով, ջանում էին պարտադրել հանրապետություններին միութենական պետության մոդելը՝ ուժեղ կենտրոնացված իշխանության հատկանիշներով: Այդպիսի ուղղվածություն ունեին 1991թ. աշնանը ստորագրված ԽՍՀՄ-ի նախագահի հրամանագրերը, Պետխորհրդի որոշումները, միութենական դաշնագրի "վերամշակված" տարբերակը, որի անորոշ ձևակերպումները կարող

---

[8] Տե՛ս Հայաստանի Հանրապետություն, 11 և 14.IX.1991, 18.X.1991:
[9] Տե՛ս Հայաստան, 17.X.1991, 5.XI.1991:
[10] Տե՛ս Известия, 16.XI.1991.
[11] Տե՛ս Советская Россия, 16.XI.1991.

էին իրավական հիմք ծառայել՝ միութենական իշխանությունների կողմից արտակարգ միջոցառումների կամայական իրականացման համար:

Պահպանողականների նման գործելակերպը ավելի էր ուժեղացնում հանրապետությունների ձգտումը ինքնիշխանության և անկախության: Ռուսաստանի ղեկավարությունը, որ մասնակցում էր նովո-օգարյովյան գործընթացին, դեկտեմբերի սկզբին վերանայեց իր դիրքորոշումը: Դիրքորոշման փոփոխության վրա ազդեց նաև դեկտեմբերի 1-ին Ուկրաինայում անցկացված անկախության հանրաքվեն, որի արդյունքների հիման վրա այդ հանրապետությունը հռչակեց իր անկախությունը, որն էլ ճանաչվեց Ռուսաստանի կողմից[12]: Այս իրադարձությունները վերջնականապես ձախողեցին միութենական պետության պահպանմանն ուղղված փորձերը:

Ուկրաինական հանրաքվեից մեկ շաբաթ անց՝ դեկտեմբերի 8-ին Մինսկի մոտակայքում գտնվող Բելովեժսկ բնակավայրում Բելառուսի, Ռուսաստանի Դաշնության (ՌԴ) և Ուկրաինայի ղեկավարները՝ որպես ԽՍՀ Միության հիմնադիր պետությունների ղեկավարներ, արձանագրեցին, որ ԽՍՀՄ-ը որպես միջազգային իրավունքի սուբյեկտ ու աշխարհաքաղաքական իրողություն դադարեցնում է իր գոյությունը, և ստորագրեցին համաձայնագիր Անկախ Պետությունների Համագործակցություն (ԱՊՀ) ստեղծելու մասին: Ըստ այդ համաձայնագրի, ստորագրող կողմերն իրենց հարաբերությունները զարգացնելու էին "փոխադարձաբար ճանաչելու և միմյանց ինքնիշխանությունը հարգելու հիման վրա, իրավահավասարության և ներքին գործերին չմիջամտելու սկզբունքների վրա"[13]:

Ռուսաստանի ղեկավարությունը գտնում էր, որ ԱՊՀ-ի ստեղծումը՝ Նովո-Օգարյովոյի փակուղուց դուրս գալու միակ ելքն էր և հնարավորություն էր տալիս խուսափելու հարավսլավական տարբերակից՝ քայքայվող միութենական պետության սուբյեկտների միջև լայնածավալ պատերազմից[14]:

Չնայած Բելովեժսկում ձեռք բերված համաձայնությունների օրինականության վերաբերյալ գոյություն ունեցող հակասական գնահատականներին, խորհրդային կայսրության քայքայումը դրանից շատ վաղուց էր սկսվել, և ճգնաժամային երևույթները խորհրդային տնտեսության մեջ, երկրի քաղաքական համակարգում, ազգամիջյան հարաբերությունների ոլորտում անխուսափելիորեն տանում էին դեպի Խորհրդային Միության փլուզում:

Այդ դեզինտեգրացիոն գործընթացներին զուգընթաց զարգանում էին երկկողմանի անմիջական հարաբերությունները նախկին խորհրդային հանրապետությունների միջև: Դեկտեմբերի սկզբին Հայաստանը առևտրատնտեսա-

---

[12] Տե՛ս Известия, 3 և 5.XII.1991:
[13] Дипломатический вестник, 1992, но. 1, с.3-6.
[14] Տե՛ս Ազգ, 11 XII.1991:

կան համագործակցության վերաբերյալ պայմանագրեր ստորագրեց Ռուսաստանի, Ուկրաինայի, Լատվիայի հետ[15]: Ռուսաստանի հետ կնքված համաձայնագիրը՝ անկախության հռչակումից հետո առաջին խոշոր տնտեսական համաձայնագիրն էր, որը ՀՀ-ը կնքում էր մեկ այլ պետության հետ: Այն, ինչպես և վերոնշյալ մյուս համաձայնագրերը, թույլ էր տալիս պահպանել ստեղծված տնտեսական կապերը և դրա հետ մեկտեղ երկու հանրապետություններին մոտեցնում էր փոխշահավետ առևտրի աշխարհում ընդունված կանոններին: Փաստաթղթում հաշվի էին առնվում գոյություն ունեցող իրողությունները և նախատեսվում էր կողմերի միջև կատարվող առևտրում առկա անհամամասնությունների աստիճանական շտկում: Այդ ժամանակահատվածում նաև մշակվում էր Հայաստանի և Ռուսաստանի միջև միջպետական հարաբերությունների հիմունքների մասին պայմանագիրը:

Խորհրդային Միությունն էլ, ինչպես և մյուս կայսրությունները, զերծ չէր ազգամիջյան հակամարտություններից, որոնք գորբաչովյան "վերակառուցման" քաղաքականությունը չկարողացավ կարգավորել, ինչը ԽՍՀՄ-ի փլուզման պատճառներից մեկը հանդիսացավ: Խորհրդային Միության լուծարումը ազատեց այդ հակամարտությունները կայսերական կենտրոնի ազդեցությունից՝ աստիճանաբար դրանք դարձնելով միջազգային քաղաքականության առարկա, ինչը նոր միջնորդությունների և կարգավորմանն ուղղված մոտեցումների հեռանկար էր բացում:

Սակայն այդ օրերին կենտրոնի աջակցությունից զրկված ադրբեջանական իշխանությունների համար անընդունելի էր որևէ չեզոք միջնորդություն, նրանք ղարաբաղյան խնդիրը փորձում էին լուծել ռազմական ճանապարհով: Ադրբեջանական կողմը առիթը բաց չէր թողնում իրադրությունը սրելու և Ռուսաստանի ու Ղազախստանի միջնորդությամբ ընթացող բանակցությունները ծախողելու համար: Դա նաև Մութալիբովի հեղինակազրկված վարչակազմին՝ ժողովրդի ուշադրությունը ներքին խնդիրներից շեղելու և իշխանությունն իր ձեռքում պահելու հնարավորություն էր տալիս:

Չնայած ստեղծված լարված իրավիճակին, դեկտեմբերի 10-ին Լեռնային Ղարաբաղում անցկացվեց հանրաքվե, որի արդյունքների համաձայն նրա բնակչության ճնշող մեծամասնությունն արտահայտվեց ավելի վաղ հռչակված ԼՂՀ-ի լիակատար անկախության օգտին[16]: Նախկին խորհրդային հանրապետություններից ու Եվրոպայից ժամանած դիտորդները, որոնց հիմնական մասը Հայաստանից էր, վկայում էին հանրաքվեի՝ միջազգային իրավական և ժողովրդավարական չափանիշներին համապատասխանելու փաստը: Ռուսաստանցի անկախ դիտորդները կոչ էին անում բոլոր երկրների

---

[15] Տե՛ս Հայաստանի Հանրապետություն, 6 և 10.XII.1991:
[16] Տե՛ս Հայաստանի Հանրապետություն, 12.XII.1991:

խորհրդարաններին, համաշխարհային հանրությանը՝ զորավիգ լինել դարաբաղցիներին, իսկ ՌԴ-ի նախագահին ուղղված դիմումի մեջ նշում էին, որ Ռուսաստանը պետք է հավաստի 1813թ.-ի Գյուլիստանի պայմանագիրը կատարելու իր պատրաստակամությունը և լինի Ղարաբաղի ժողովրդի խաղաղ կյանքի երաշխավորը[17]:

Թեև աշխարհի պետությունները չճանաչեցին հանրաքվեի արդյունքները և նորաստեղծ հանրապետությունը, ժողովրդավարական չափանիշներով անցկացված հանրաքվեն կարևոր քաղաքական քայլ էր ԼՂՀ կայացման գործում: Ինչ վերաբերում է Ռուսաստանին, նրա քաղաքական վերնախավը չէր կարող բացահայտորեն սատարել ԼՂ-ի և նախկին խորհրդային մյուս ինքնավարությունների անկախացման գործընթացին, քանի որ Ռուսաստանն իր կազմում ուներ բազմաթիվ ինքնավար կազմավորումներ:

Իսկ նախկին միութենական հանրապետությունների անկախությունը ՌԴ-ի ղեկավարությունը դեկտեմբերի կեսերին ճանաչեց: Դա էական նշանակություն ունեցավ այդ հանրապետությունների միջազգային ճանաչման գործում: Հայաստանի անկախությունը ճանաչելու մասին Ռուսաստանի նախագահ Ելցինի դեկտեմբերի 17-ի հայտարարության մեջ նշվում էր Ռուսաստանի և Հայաստանի միջև միջպետական նոր հարաբերություններ հաստատելու և զարգացնելու անհրաժեշտությունը՝ պահպանելով ու ամրապնդելով բարեկամության, բարիդրացիության, փոխադարձ հարգանքի բազմադարյան ավանդույթները[18]:

Հաջորդ օրը՝ դեկտեմբերի 18-ին, Հայաստանի նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը հանդես եկավ հայտարարությամբ՝ Ռուսաստանի անկախությունը ճանաչելու մասին, և այդ կապակցությամբ տրված հարցազրույցում նշեց, որ Հայաստանի համար Ռուսաստանի հետ հարաբերություններն ունեցել են և հետագայում էլ կունենան առաջնային նշանակություն[19]: Թեև Լ. Տեր-Պետրոսյանի վարած քաղաքականությունը հիմնականում արևմտամետ էր և ուներ հակառուսական դրսևորումներ, երկու հանրապետությունների կողմից անկախության փոխադարձ ճանաչումը կարևոր իրադարձություն էր երկկողմանի հարաբերությունների բազմադարյա պատմության մեջ և դրանք զարգացնելու նոր հնարավորություն էր ընձեռում:

Ռուսաստանի կողմից Հայաստանի և նախկին միութենական մյուս հանրապետությունների անկախության ճանաչումը որոշակի երաշխիք էր, որ կազմավորվող ԱՊՀ-ն նոր միութենական պետություն չէ: Թեև ակնհայտ էր, որ ԱՊՀ-ում Ռուսաստանը առաջատար դեր է խաղալու, սակայն Ռուսաստանի

---

[17] Տե՛ս նույն տեղում, 14.XII.1991:
[18] Տե՛ս նույն տեղում, 19.XII.1991:
[19] Տե՛ս Հայաստանի Հանրապետություն, 19.XII.1991:

ղեկավարության հրաժարումը նոր կայսրություն ստեղծելու ծրագրերից նպաստեց նրան, որ Համագործակցության երեք հիմնադիր պետություններին դեկտեմբերի 21-ին Ալմա-Աթայում ստորագրված հռչակագրով՝ որպես ԱՊՀ-ի համահիմնադիրներ, միացան նախկին խորհրդային միութենական հանրապետություններից ևս ութը, այդ թվում նաև Հայաստանը[20]: Ալմա-Աթայի հռչակագիրը վերջնականապես արձանագրեց ԽՍՀՄ-ի գոյության դադարեցումը: Խորհրդային Միության առաջին և վերջին նախագահ Մ. Գորբաչովը դեկտեմբերի 25-ին հայտարարեց իր հրաժարականի մասին:

ԽՍՀՄ-ի լուծարումից հետո ստեղծված աշխարհաքաղաքական, տնտեսական նոր պայմաններում Ռուսաստանի հետ հարաբերությունների պահպանումն ու զարգացումը և ԱՊՀ-ի կազմում ընդգրկվելը որոշակի երաշխիք էին հանդիսանում նորանկախ Հայաստանի Հանրապետության անվտանգության ապահովման, տնտեսական կառույցների գործունեության շարունակման համար՝ առնվազն մինչև ազգային անվտանգության համակարգի, զինված ուժերի, տնտեսական նոր կապերի ստեղծումը:

ԽՍՀՄ-ի փլուզումը նոր իրավիճակ ստեղծեց ողջ աշխարհում ընդհանրապես և հարավկովկասյան տարածաշրջանում մասնավորապես: Հետխորհրդային տարածքում անկախ պետությունների առաջացումը նոր փուլ սկզբնավորեց նախկին խորհրդային Միության կազմի մեջ մտնող ժողովուրդների հարաբերություններում, այդ թվում հայ-ռուսական հարաբերություններում: Անկախ Հայաստանի և Ռուսաստանի համար լայն հնարավորություններ էին բացվում իրավահավասար, փոխշահավետ հարաբերություններ ու բազմաբնույթ կապեր հաստատելու և համագործակցություն զարգացնելու համար՝ հենվելով բազմադարյան փորձի և ավանդույթների վրա:

Նախկին խորհրդային Միության փլատակների վրա նոր կառույցի՝ ԱՊՀ-ի ստեղծումը նախ և առաջ կայսրության սուբյեկտների միջև խոշոր արյունալի բախումներից խուսափելու և նրանց բաժանումը քաղաքակիրթ ձևով իրականացնելու միջոց էր: ԽՍՀՄ-ից ժառանգելով բազմաթիվ չլուծված և հակասություններով լի խնդիրներ, ԱՊՀ-ը նաև դրանց լուծմանը օժանդակելու դժվարին առաքելություն ուներ, որի արդյունավետ կատարմամբ նաև պետք է ապացուցեր իր կենսունակությունը:

---

[20] См. Дипломатический вестник, 1992, ко1, с. 6-7.